Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Պ-989-20.12.2024,07.02.2025-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ոստիկանության մասին» 2001 թվականի ապրիլի 16-ի ՀՕ-177 օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1) «իրականացնելիս» բառից հետո լրացնել «, իսկ Լիազոր մարմինը՝ սույն մասի 6-րդ կետով նախատեսված դեպքերում,» բառերը.

2) 3-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

3) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4-րդ, 5-րդ եւ 6-րդ կետեր.

«4) Հայաստանի Հանրապետության պետական մարմիններից (բացառությամբ Պաշտպանության նախարարության, Արտաքին հետախուզության ծառայության և Պետական պահպանության ծառայության), Ազգային անվտանգության ծառայությունից՝ միայն պետական սահմանի անցման կետերում տեղադրված տեսահսկման համակարգերի մասով, տեղական ինքնակառավարման մարմիններից, պետական եւ համայնքային ենթակայության կազմակերպություններից ու հիմնարկներից, էլեկտրոնային համակարգերի միջոցով (տեսանկարահանող համակարգերով) հսկվող ավտոկայանատեղեր ունեցող ավտոկայանատեղի գործունեությունը կազմակերպող մարմնից, ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառի կառավարում իրականացնող և շտապ օգնության բնագավառի լիազոր մարմիններից եւ օդանավակայաններից պահանջելու եւ ստանալու տեսագրություններ, ունենալու հասանելիություն դրանց տարածքում շինության դրսի կողմից տեղադրված տեսահսկման համակարգերին, իսկ ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառի կառավարում իրականացնող և շտապ օգնության բնագավառի լիազոր մարմինների դեպքում՝ օրենքով նախատեսված համապատասխան տրանսպորտային միջոցների տեսահսկման համակարգերին:

Սույն կետում նշված մարմինները, կազմակերպությունները եւ հիմնարկները պարտավոր են տեսահսկման համակարգերի տեսագրությունները պահպանել առնվազն 15 օր: Սույն կետում նշված մարմիններից, կազմակերպություններից եւ հիմնարկներից պահանջվող տեսահսկման համակարգերին հասանելիությունը պետք է ներառի՝

ա. տեսահսկման համակարգին օգտագործողի հնարավորություն,

բ. առցանց ռեժիմով տեսախցիկների կենդանի (LIVE) տեսանյութի դիտման հնարավորություն,

գ. առցանց ռեժիմով տեսախցիկների կենդանի (LIVE) տեսանյութի հոսքի (stream) ստացման եւ պահպանման հնարավորություն,

դ. առցանց ռեժիմով տեսանկարահանող սարքից տեսախցիկների տեսանյութի դիտման հնարավորություն,

ե. առցանց ռեժիմով տեսանկարահանող սարքից տեսախցիկների տեսանյութի բեռնման, արտահանման հնարավորություն,

զ. առցանց ռեժիմով տեսանկարահանվող գործողությունների՝ լոգավորման շտեմարանների եւ դիտման սարքերի հասանելիության հնարավորություն.

5) տեսահսկման համակարգերի միջոցով իրականացնելու անձանց նույնականացում բացառապես այն դեպքերում, եթե առկա է հիմնավոր կասկած, որ անձը կատարել է հանցագործություն կամ վարչական իրավախախտում.

6) տեսահսկման համակարգերի միջոցով իրականացնելու տվյալների մշակում հետեւյալ նպատակներով.

ա. իրավախախտումների կանխման, հայտնաբերման եւ բացահայտման, ինչպես նաև օրենքով նախատեսված վարչական պատասխանատվության միջոցների կիրառման.

բ. հանցանք կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում արագ արձագանքման,

գ. քննությունից կամ պատիժը կրելուց խուսափող անձանց եւ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի հայտնաբերման,

դ. անհետ կորած քաղաքացիների եւ հետախուզվող տրանսպորտային միջոցների հայտնաբերման,

ե. հասարակական կարգի պահպանության եւ հասարակական անվտանգության ապահովման.

զ. տրանսպորտային հոսքի կառավարման, ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման,

է. ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների հետ համագործակցության,

ը. օրենքով սահմանված նպատակներով պետական եւ օրենքով չարգելված նպատակներով ոչ պետական կազմակերպություններին վճարովի հիմունքներով, միայն ապանձնավորված եղանակով, անհրաժեշտ վերլուծական տվյալների տրամադրման:»:

Հոդված 2. Օրենքի 19-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 5-10-րդ մասերով.

«5. Սույն հոդվածով նախատեսված տեսագրություններ պահանջելը եւ ստանալը, տեսահսկման համակարգերին հասանելիությունը, տեսահսկման համակարգերի միջոցով տվյալների մշակումը եւ տեսահսկման համակարգերի կիրառումը կարող են իրականացվել բացառապես սույն հոդվածով նախատեսված նպատակներով եւ այդ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ նվազագույն չափով:

6. Սույն հոդվածով նախատեսված տեսահսկման համակարգերին մուտք գործելու իրավունք ունեն իրավասու աշխատակիցները (ծառայողները), որոնց շրջանակը սահմանվում է Լիազոր մարմնի ղեկավարի հրամանով: Տեսահսկման համակարգերին մուտք գործելու յուրաքանչյուր դեպքում պահանջվում է իրավասու աշխատակցի (ծառայողի) խիստ նույնականացում, իրավասու աշխատակցի (ծառայողի) մուտքային գործողությունների վերաբերյալ էլեկտրոնային գրանցամատյանում կատարվում է հաշվառում (լոգավորում), իսկ աշխատակցի (ծառայողի) կողմից պարտադիր մուտքագրվում են իր տվյալները եւ մուտք գործելու նպատակն արտացոլող տեղեկատվությունը:

7. Սույն հոդվածով նախատեսված տեսահսկման համակարգերի միջոցով տեսանյութի ներբեռնման յուրաքանչյուր դեպքում տեսանյութի վրա պետք է արտացոլվեն դրա ներբեռնման օրը, ամսաթիվը, տարեթիվը և ժամը, իսկ տեսանյութի վրա պետք է արտացոլվի «Ներքին գործերի նախարարություն» անվամբ ջրանշան: Առցանց ռեժիմով տեսահսկման դեպքում տեսահսկող սարքի էկրանին պետք է առցանց ռեժիմով արտացոլվեն տեսահսկման օրը, ամիսը, տարեթիվը և ժամը:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված աշխատակիցները (ծառայողները) պարտավոր են պահպանել տեսահսկման համակարգերով իրենց հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը, ինչպես նաեւ՝ տեսահսկման համակարգերով ստացված տվյալները մշակել բացառապես օրենքով նախատեսված նպատակներով: Սույն մասով նախատեսված պարտականության չկատարումն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

9. Լիազոր մարմինն իր տեսահսկման համակարգերի մասով համայնքներին տրամադրում է սույն հոդվածով նախատեսված հասանելիություն այն սկզբունքով, որ յուրաքանչյուր համայնք հասանելիություն ունենա Լիազոր մարմնի՝ միայն տվյալ համայնքի վարչական տարածքում տեղադրված տեսահսկման համակարգերին: Լիազոր մարմնի և համայնքների միջև տեսահսկման համակարգերին փոխադարձ հասանելիությունն ապահովվում է փոխադարձ հատուցմամբ՝ տեսահսկման համակարգերով հայտնաբերված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով իրավախախտումը կատարած անձանցից գանձված գումարի մի մասը համապատասխանաբար պետական կամ համայնքային բյուջե փոխանցելու միջոցով, որի չափը որոշելու բանաձևը սահմանվում է Կառավարության որոշմամբ:

10. Տեսահսկման համակարգերին հասանելիության տրամադրման եւ տեսահսկման իրականացման կարգը սահմանվում է Կառավարության որոշմամբ:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի օգոստոսի 9-ից:

~~*Առաջին ընթերցում*~~
Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Պ-989-20.12.2024,07.02.2025-ՊԱ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ոստիկանության մասին» 2001 թվականի ապրիլի 16-ի ՀՕ-177 օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1) «իրականացնելիս» բառից հետո լրացնել «, իսկ Լիազոր մարմինը՝ սույն մասի 6-րդ կետով նախատեսված դեպքերում,» բառերը.

2) 3-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

3) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4-րդ, 5-րդ եւ 6-րդ կետեր.

«4) Հայաստանի Հանրապետության պետական մարմիններից (բացառությամբ Պաշտպանության նախարարության ~~եւ,~~ Արտաքին հետախուզության ծառայության և Պետական պահպանության ծառայության), Ազգային անվտանգության ծառայությունից՝ միայն պետական սահմանի անցման կետերում~~, Պետական պահպանության ծառայությունից՝ միայն փողոցներում եւ փողոցների խաչմերուկներում~~ տեղադրված տեսահսկման համակարգերի մասով, տեղական ինքնակառավարման մարմիններից, պետական եւ համայնքային ենթակայության կազմակերպություններից ու հիմնարկներից, էլեկտրոնային համակարգերի միջոցով (տեսանկարահանող համակարգերով) հսկվող ավտոկայանատեղեր ունեցող ավտոկայանատեղի գործունեությունը կազմակերպող մարմնից, ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառի կառավարում իրականացնող և շտապ օգնության բնագավառի լիազոր մարմիններից եւ օդանավակայաններից պահանջելու եւ ստանալու տեսագրություններ, ունենալու հասանելիություն դրանց տարածքում շինության դրսի կողմից տեղադրված տեսահսկման համակարգերին, իսկ ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառի կառավարում իրականացնող և շտապ օգնության բնագավառի լիազոր մարմինների դեպքում՝ օրենքով նախատեսված համապատասխան տրանսպորտային միջոցների տեսահսկման համակարգերին:

Սույն կետում նշված մարմինները, կազմակերպությունները եւ հիմնարկները պարտավոր են տեսահսկման համակարգերի տեսագրությունները պահպանել առնվազն 15 օր: Սույն կետում նշված մարմիններից, կազմակերպություններից եւ հիմնարկներից պահանջվող տեսահսկման համակարգերին հասանելիությունը պետք է ներառի՝

ա. տեսահսկման համակարգին օգտագործողի հնարավորություն,

բ. առցանց ռեժիմով տեսախցիկների կենդանի (LIVE) տեսանյութի դիտման հնարավորություն,

գ. առցանց ռեժիմով տեսախցիկների կենդանի (LIVE) տեսանյութի հոսքի (stream) ստացման եւ պահպանման հնարավորություն,

դ. առցանց ռեժիմով տեսանկարահանող սարքից տեսախցիկների տեսանյութի դիտման հնարավորություն,

ե. առցանց ռեժիմով տեսանկարահանող սարքից տեսախցիկների տեսանյութի բեռնման, արտահանման հնարավորություն,

զ. առցանց ռեժիմով տեսանկարահանվող գործողությունների՝ լոգավորման շտեմարանների եւ դիտման սարքերի հասանելիության հնարավորություն.

5) տեսահսկման համակարգերի միջոցով իրականացնելու անձանց նույնականացում բացառապես այն ~~դեպքում~~ դեպքերում, եթե առկա է հիմնավոր կասկած, որ անձը կատարել է հանցագործություն կամ վարչական իրավախախտում.

6) տեսահսկման համակարգերի միջոցով իրականացնելու տվյալների մշակում հետեւյալ նպատակներով.

ա. իրավախախտումների կանխման, հայտնաբերման եւ բացահայտման, ինչպես նաև օրենքով նախատեսված վարչական պատասխանատվության միջոցների կիրառման.

բ. հանցանք կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում արագ արձագանքման,

գ. քննությունից կամ պատիժը կրելուց խուսափող անձանց եւ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի հայտնաբերման,

դ. անհետ կորած քաղաքացիների եւ հետախուզվող տրանսպորտային միջոցների հայտնաբերման,

ե. հասարակական կարգի պահպանության եւ հասարակական անվտանգության ապահովման.

զ. տրանսպորտային հոսքի կառավարման, ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման,

է. ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների հետ համագործակցության,

ը. օրենքով սահմանված նպատակներով պետական եւ օրենքով չարգելված նպատակներով ոչ պետական կազմակերպություններին վճարովի հիմունքներով, միայն ապանձնավորված եղանակով, անհրաժեշտ վերլուծական տվյալների տրամադրման:»:

Հոդված 2. Օրենքի 19-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 5-~~8~~10-րդ մասերով.

«5. Սույն հոդվածով նախատեսված տեսագրություններ պահանջելը եւ ստանալը, տեսահսկման համակարգերին հասանելիությունը, տեսահսկման համակարգերի միջոցով տվյալների մշակումը եւ տեսահսկման համակարգերի կիրառումը կարող են իրականացվել բացառապես սույն հոդվածով նախատեսված նպատակներով եւ այդ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ նվազագույն չափով:

6. Սույն հոդվածով նախատեսված տեսահսկման համակարգերին մուտք գործելու իրավունք ունեն իրավասու աշխատակիցները (ծառայողները), որոնց շրջանակը սահմանվում է Լիազոր մարմնի ղեկավարի հրամանով: Տեսահսկման համակարգերին մուտք գործելու յուրաքանչյուր դեպքում պահանջվում է իրավասու աշխատակցի (ծառայողի) խիստ նույնականացում, իրավասու աշխատակցի (ծառայողի) մուտքային գործողությունների վերաբերյալ էլեկտրոնային գրանցամատյանում կատարվում է հաշվառում (լոգավորում), իսկ աշխատակցի (ծառայողի) կողմից պարտադիր մուտքագրվում են իր տվյալները եւ մուտք գործելու նպատակն արտացոլող տեղեկատվությունը:

7. Սույն հոդվածով նախատեսված տեսահսկման համակարգերի միջոցով տեսանյութի ներբեռնման յուրաքանչյուր դեպքում տեսանյութի վրա պետք է արտացոլվեն դրա ներբեռնման օրը, ամսաթիվը, տարեթիվը և ժամը, իսկ տեսանյութի վրա պետք է արտացոլվի «Ներքին գործերի նախարարություն» անվամբ ջրանշան: Առցանց ռեժիմով տեսահսկման դեպքում տեսահսկող սարքի էկրանին պետք է առցանց ռեժիմով արտացոլվեն տեսահսկման օրը, ամիսը, տարեթիվը և ժամը:

~~7~~8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված աշխատակիցները (ծառայողները) պարտավոր են պահպանել տեսահսկման համակարգերով իրենց հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը, ինչպես նաեւ՝ տեսահսկման համակարգերով ստացված տվյալները մշակել բացառապես օրենքով նախատեսված նպատակներով: Սույն մասով նախատեսված պարտականության չկատարումն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

~~8~~9. Լիազոր մարմինն իր տեսահսկման համակարգերի մասով համայնքներին տրամադրում է սույն հոդվածով նախատեսված հասանելիություն այն սկզբունքով, որ յուրաքանչյուր համայնք հասանելիություն ունենա Լիազոր մարմնի՝ միայն տվյալ համայնքի վարչական տարածքում տեղադրված տեսահսկման համակարգերին: Լիազոր մարմնի և համայնքների միջև տեսահսկման համակարգերին փոխադարձ հասանելիությունն ապահովվում է փոխադարձ հատուցմամբ՝ տեսահսկման համակարգերով հայտնաբերված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով իրավախախտումը կատարած անձանցից գանձված գումարի մի մասը համապատասխանաբար պետական կամ համայնքային բյուջե փոխանցելու միջոցով, որի չափը որոշելու բանաձևը սահմանվում է Կառավարության որոշմամբ:

10. Տեսահսկման համակարգերին հասանելիության տրամադրման եւ տեսահսկման իրականացման կարգը սահմանվում է Կառավարության որոշմամբ:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի ~~հուլիսի 1-ից~~ օգոստոսի 9-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ և ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Պ-989-20.12.2024, 07.02.2025-ՊԱ-011/1), «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Պ-989[1]-20.12.2024, 07.02.2025-ՊԱ-011/1), «ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Պ-989[2]-20.12.2024-ՊԱ-011/1), «ԱՎԻԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Պ-989[3]-20.12.2024, 07.02.2025-ՊԱ-011/1) ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Պ-989[4]-20.12.2024-ՊԱ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հայկ Սարգսյան**	«Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով լրացվող 4-րդ կետ	Նախագծի նպատակների առավել արդյունավետ և ամբողջական իրագործման, հանցավորության դեմ պայքարում պատշաճ տեղեկատվության ստացման հնարավորություններն ընդլայնելու համար առաջարկվում է «Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով լրացվող 4-րդ կետում կատարել լրացում, որի համաձայն՝ տեսագրություններ և տեսահսկման համակարգերին հասանելիություն տրամադրելու պարտականություն ունեցող սուբյեկտների շարքում կընդգրկվեն նաև ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառի կառավարում իրականացնող և շտապ օգնության	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է:

			բնագավառի լիազոր մարմինները, որոնք հասանելիություն կտրամադրեն համապատասխան տրանսպորտային միջոցների տեսահսկման համակարգերին:		
2.	**ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հայկ Սարգսյան**	«Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված, «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված, «Ավիացիայի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ	Նախագծերի փաթեթով նախատեսվող կարգավորումների իրացման համար ողջամիտ ժամկետ տրամադրելու նկատառումներից ելնելով՝ առաջարկվում է նախագծերում ուժի մեջ մտնելու ժամկետը 2025թ. հուլիսի 1-ի փոխարեն սահմանել 2025թ. օգոստոսի 9-ը:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է:

		հոդված և «Վարչական իրավախախտումներ ի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված			
3.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով լրացվող 4-րդ կետ	Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» օրենքի համաձայն՝ Պետական պահպանության ծառայությունը պետական պահպանության օբյեկտների անվտանգության ապահովման և պահպանվող օբյեկտների պաշտպանության ոլորտի իր գործառույթներն իրականացնում է իրավական, կազմակերպական, պահպանական, ռեժիմային, օպերատիվ-հետախուզական, տեխնիկական և այլ միջոցառումների համակցության հիման վրա՝ գործունեության բացահայտ և գաղտնի մեթոդների ու միջոցների կիրառման համակցության սկզբունքով: Տեխնիկական միջոցառումները, ի թիվս այլ միջոցների, իրականացվում են նաև տեսահսկման միջոցով: Պետական պահպանության ծառայության տիրապետման ներքո գտնվող տեսանկարահանող սարքերը տեղադրված են այնպիսի վայրերում, որոնք ընդգրկում են պետական պահպանության օբյեկտների երթուղիները, նրանց ժամանակավոր կամ մշտական գտնվելու վայրերը (պահպանվող	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

			օբյեկտների ներքին տարածքը) և դրանց շրջակայքը: Նշված տեսանկարահանող սարքերի միջոցով արձանագրվող տեղեկատվության ուսումնասիրությունն իրականացվում է՝ ապահովելու համար Ծառայության առջև դրված խնդիրների իրականացումը, այդ թվում՝ պետական պահպանության օբյեկտների անվտանգության ապահովումը: Ընդ որում, Ծառայության տիրապետման ներքո գտնվող տեսանկարահանող սարքերի քանակը, որին նախատեսվում է ստանալ հասանելիություն, մեծ չէ: Հետևաբար, դրա օգտակարությունը հանցագործությունների կանխման կամ բացահայտման գործում նշանակալի լինել չի կարող: Պետական պահպանության ծառայությունը մշտապես համագործակցում է Ներքին գործերի նախարարության հետ՝ հանցագործությունների կանխման և բացահայտման նպատակով և, ըստ անհրաժեշտության, տրամադրում է իր տիրապետման ներքո գտնվող տեսանկարահանող սարքերի տեսագրությունները: Նշված դեպքերում տեսագրությունները տրամադրելիս Ծառայությունը հնարավորություն է ունենում՝ վերահսկելու տրամադրվող տվյալների ծավալը և բովանդակությունը, ինչն անհնարին կդառնա տեսանկարահանող սարքերին ամբողջական հասանելիություն տալու պարագայում՝ հանգեցնելով գործունեության գաղտնի մեթոդների ու միջոցների բացահայտման:		

			Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք Նախագծով բացառություն նախատեսել Պետական պահպանության ծառայության կողմից վերահսկվող տեսահսկման համակարգերին հասանելիություն ունենալու մասով՝ բացառելով Ծառայության բոլոր տեսանկարահանող սարքերին հասանելիության ապահովումը:		
4.	**ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հայկ Սարգսյան**	«Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով լրացվող 5-րդ կետ և 6-րդ կետի «ա» պարբերություն	Նախագծի նպատակների առավել արդյունավետ իրագործման և իրավական որոշակիության ապահովման առումով, որպեսզի հնարավորինս հստակեցվի տեսահսկման միջոցով ստացված տվյալները իրավաչափ նպատակներով օգտագործելու, այդ թվում՝ անձի նույնականացում իրականացնելու հնարավորությունը, առաջարկում ենք «Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով լրացվող 5-րդ կետում ամրագրել, որ Ոստիկանությունը կարող է անձի նույնականցում կատարել նաև անձի կողմից վարչական իրավախախտում կատարելու անմիջական կասկածի առկայության դեպքում, իսկ 6-րդ կետի «ա» պարբերությունում ամրագրել, որ Ներքին գործերի նախարարությունը տեսահսկման համակարգերի միջոցով տվյալների մշակում կարող է իրականացնել նաև օրենքով նախատեսված վարչական պատասխանատվության միջոցների կիրառման նպատակով:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է:

5.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով լրացվող 6-րդ մաս	Տեսահսկման համակարգերի միջոցով ստացվող տվյալների պաշտպանության առավել բարձր մակարդակ ապահովելու և հնարավոր չարաշահումները կանխարգելելու համար առաջարկվում է «Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծով նախատեսել կարգավորումներ՝ իրավասու աշխատակիցների (ծառայողների) կողմից տեսահսկման համակարգերին յուրաքանչյուր մուտքը խիստ նույնականացման միջոցով իրականացնելու համար:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
6.	**ՀՀ կառավարություն**	Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	Տեսահսկման համակարգերի միջոցով ստացված տեսագրությունները օրենքով նախատեսված նպատակների համար իրավաչափ կերպով, այդ թվում՝ որպես պատշաճ ապացույցներ օգտագործելու համար առաջարկվում է Նախագծով նախատեսել կարգավորումներ՝ տեսահսկման համակարգերի միջոցով տեսանյութի ներբեռնման յուրաքանչյուր դեպքում տեսանյութի վրա ներբեռնման օրվա, ամսաթվի, տարեթվի, ներբեռնման ժամի, տեսանյութի վրա «Ներքին գործերի նախարարություն» անվամբ ջրանշանի արտացոլման համար: Միաժամանակ, առաջարկվում է նախատեսել կարգավորումներ՝ առցանց ռեժիմով տեսահսկման դեպքում տեսահսկող սարքի էկրանին տեսահսկման օրվա, ամսվա, տարեթվի, ժամի առցանց արտացոլման համար: Ըստ այդմ՝ առաջարկում ենք Ոստիկանության մասին» օրենքում	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է:

			լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով լրացվող 6-րդ մասից հետո լրացնել 7-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ. «7. Սույն հոդվածով նախատեսված տեսահսկման համակարգերի միջոցով տեսանյութի ներբեռնման յուրաքանչյուր դեպքում տեսանյութի վրա պետք է արտացոլվեն դրա ներբեռնման օրը, ամսաթիվը, տարեթիվը և ժամը, իսկ տեսանյութի վրա պետք է արտացոլվի «Ներքին գործերի նախարարություն» անվամբ ջրանշան: Առցանց ռեժիմով տեսահսկման դեպքում տեսահսկող սարքի էկրանին պետք է առցանց ռեժիմով արտացոլվեն տեսահսկման օրը, ամիսը, տարեթիվը և ժամը:»: Միաժամանակ, առաջարկում ենք փոփոխել լրացվող մասին հաջորդող մասերի համարակալումը:		
7.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված, «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առանձնահատկությունների մասին»	Նախագծի նպատակների առավել արդյունավետ և ամբողջական իրագործման, այդ կապակցությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետ համագործակցություն ապահովելու համար առաջարկում ենք՝ համայնքների և Ներքին գործերի նախարարության միջև տեսահսկման համակարգերին հասանելիությունը ապահովել փոխադարձության սկզբունքով այն տրամաբանությամբ, որպեսզի յուրաքանչյուր համայնք հասանելիություն ունենա Ներքին գործերի նախարարության՝	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է:

		օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	միայն տվյալ համայնքի տարածքում տեղադրված տեսահսկման համակարգերին, Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծից հանել համապատասխան իրավախախտումը կատարած անձանցից գանձված գումարի 25%-ը տեղական ինքնակառավարման համապատասխան մարմնի բյուջե փոխանցելու վերաբերյալ կարգավորումը, նախագծերի փաթեթում ամրագրել, որ Ներքին գործերի նախարարության և համայնքների միջև փոխադարձ հասանելիությունը պետք է լինի փոխադարձ հատուցմամբ, իսկ վերջինիս բանաձևը սահմանելու լիազորությունը վերապահել Կառավարությանը: Ըստ այդմ, առաջարկում ենք լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 8-րդ մասից առաջ լրացնել նոր մաս՝ հետևյալ բովանդակությամբ. Լիազոր մարմինն իր տեսահսկման համակարգերի մասով համայնքներին տրամադրում է սույն հոդվածով նախատեսված հասանելիություն այն սկզբունքով, որ յուրաքանչյուր համայնք հասանելիություն ունենա Լիազոր մարմնի՝ միայն տվյալ համայնքի վարչական		

			տարածքում տեղադրված տեսահսկման համակարգերին: Լիազոր մարմնի և համայնքների միջև տեսահսկման համակարգերին փոխադարձ հասանելիությունն ապահովվում է փոխադարձ հատուցմամբ՝ տեսահսկման համակարգերով հայտնաբերված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով իրավախախտումը կատարած անձանցից գանձված գումարի մի մասը համապատասխանաբար պետական կամ համայնքային բյուջե փոխանցելու միջոցով, որի չափը որոշելու բանաձևը սահմանվում է Կառավարության որոշմամբ:»:		